



ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ
«ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽՆԵՐԻՆ
ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

«ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.....3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻՆ4

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՔԳԾ.....4

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....4

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ» ԲԱՂԱԴՐԻՉԻ ՌԱԶՎԱՐԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ.....6

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ԹԱՓՈՆՆԵՐ» ԲԱՂԱԴՐԻՉԻ ՌԱԶՎԱՐԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ.....11

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ՋՈՒՐ» ԲԱՂԱԴՐԻՉԻՆ.....14

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ» ԲԱՂԱԴՐԻՉԻՆ.....19

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱ» ԲԱՂԱԴՐԻՉԻՆ21

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀԿ - Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԵՄ – Եվրոպական միություն

ԵՔ – Երևանի քաղաքապետարան

ԿՄԿ – Կեղտաջրերի մաքրման կայան

ԿՔԳԾ - «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր

ՀԿ- Հասարակական կազմակերպություն

ՀՈԱԿ -Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

ՎԶԵԲ - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

ՔԿԿԹ - Քաղաքային կոշտ կենցաղային թափոններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն CEE Bankwatch Network միջազգային կազմակերպության աջակցությամբ իրականացրել է «Երևանի քաղաքապետարանի և ՎՋԵԲ-ի կողմից Երևանի Կանաչ քաղաքի գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման գնահատում» ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրել է 2024թ. ընդունված Երևանի գլխավոր հատակագիծը Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի թիրախներին համահունչության տեսանկյունից:

Զեկույցի պատրաստման համար ուսումնասիրվել են Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը, Երևանի գլխավոր հատակագիծը, Երևանի գլխավոր հատակագծի մշակման համար Երևանի ավագանու կողմից 2022թ. սեպտեմբերի 13-ին ընդունված N 623-Ա որոշմամբ հաստատված նախագծային առաջադրանքը, հասարակական գնահատականները, համացանցում առկա բաց տեղեկատվությունը, Երևանի քաղաքապետարանի, ՎՋԵԲ-ի պաշտոնական կայքերը:

«ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՎՋԵԲ-ի «Կանաչ քաղաք» ծրագիրը նախաձեռնվել է 2016 թվականին: Այն միտված է Բանկի գործունեության բոլոր երկրների քաղաքներում նպաստելու կանաչ տնտեսության անցմանը: «Կանաչ քաղաքներ» ծրագրի նպատակն է.

1. Պահպանել բնապահպանական ակտիվների որակը (օդ, ջուր, հող և կենսաբազմազանություն) և օգտագործել այդ ռեսուրսները կայուն կերպով:
2. Մեղմել և հարմարվել կլիմայի փոփոխության ռիսկերին:
3. Ապահովել, որ բնապահպանական քաղաքականությունը և զարգացումները նպաստեն բնակիչների սոցիալական և տնտեսական բարեկեցությանը:

Ծրագիրն ունի հետևյալ բաղադրիչները.

1. Կանաչ քաղաք գործողությունների ծրագիր: Այն գնահատում է բնապահպանական մարտահրավերները և առաջնահերթությունները, մշակում գործողությունների ծրագիր այդ մարտահրավերներին դիմակայելու համար:
2. Կայուն ենթակառուցվածքային ներդրումներ: Ներդրումները միտված են դյուրացնելու և խթանելու հանրային կամ մասնավոր կանաչ ներդրումները ջրի և կեղտաջրերի, քաղաքային տրանսպորտի, էներգիայի, շենքերի էներգաարդյունավետության, կոշտ թափոնների և այլ ոլորտներում, բարելավելու կլիմայի փոփոխության նկատմամբ քաղաքի հարմարվողականությունը և կլիմայական ցնցումներին դիմադրողականությունը:
3. Կարողությունների զարգացում: Այս բաղադրիչը միտված է քաղաքային ղեկավարությանը և տեղական շահագրգիռ կողմերին տեխնիկական աջակցություն տրամադրել՝ ապահովելու, որ ենթակառուցվածքային ներդրումները և «Կանաչ

քաղաք» գործողությունների ծրագրում նշված քաղաքականության միջոցառումներն արդյունավետ մշակվեն, իրականացվեն և վերահսկվեն:

Ծրագիրն իրականացնում են տարբեր մարմիններ, տարբեր ֆինանսական ինստիտուտներ:

Արդեն ՎՁԵԲ-ը հայտարարում է ընդհանուր 7 միլիարդ եվրոյի դրամագլխի, 50-ից ավելի քաղաքների «Կանաչ քաղաք» ծրագրին միանալու, 36 «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրերի հաստատման, 93 նախագծերի իրականացման, տարեկան 4,956 տոննա CO₂-ի արտանետումների կրճատման մասին¹:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻՆ

«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի մաս են կազմում Երևան և Գյումրի քաղաքները: Երևան քաղաքի ԿՔԳԾ նախագիծը մշակել է «Էրնաթ ընդ Յանգ» ընկերության և գործընկեր կազմակերպությունների թիմը: ԿՔԳԾ-ի մշակումը ֆինանսավորվել է Չեխիայի կառավարության Պաշտոնական զարգացման աջակցության Տեխնիկական համագործակցության հիմնադրամի կողմից՝ ՎՁԵԲ-ի «Կանաչ տնտեսության քաղաքականության» երկխոսության շրջանակի միջոցով: Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշմամբ²:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՔԳԾ

Երևանի ԿՔԳԾ-ն³ մինչև 2030թ. իրականացվելիք կանաչ գործողությունների ռազմավարական փաստաթուղթ է՝ կառուցված «տեսլական - ռազմավարական նպատակներ - միջնաժամկետ թիրախներ» առանցքի շուրջ, որոնք հավելվել են նաև կարճաժամկետ գործողություններով (հաջորդ 3-5 տարիների համար): Ծրագրի նպատակն է խթանել Երևան քաղաքի տնտեսական և սոցիալական աճը, մեղմել շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացասական ազդեցությունը, բարձրացնել Երևան քաղաքի բնապահպանական ակտիվների որակը՝ որպես հետևանք երաշխավորելով բնակիչների կյանքի որակի բարելավումը:

Ծրագիրն անդրադարձել է շրջակա միջավայրի վիճակին (օդ, հող, ջուր, կենսաբազմազանություն և կանաչ տարածքներ), շրջակա միջավայրի վրա ճնշումներին, տրանսպորտին, էներգամատակարարմանը, շենքերում էներգաարդյունավետությանը և արտաքին լուսավորությանը, արդյունաբերության ճյուղերին, թափոնների կառավարմանը, հողօգտագործմանը:

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

2024թ. սեպտեմբերի 10-ի Երևանի ավագանու N 204-Ն որոշմամբ⁴ հաստատվեց Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը⁵: Վիճակագրական տվյալների համաձայն՝ Երևանի

¹ <https://www.ebrdgreencities.com/>

² <https://www.yerevan.am/hy/elders-decisions/21-a/>

³ <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/82/a1fb05c6c1ce38ca1807b35d07ada8789e7fd871.pdf>

⁴ <https://www.yerevan.am/hy/elders-decisions/204-n/>

⁵ <https://www.yerevan.am/uploads/media/default/0002/41/72da01eb377d66812200108fd7991cc40b9ab7ec.pdf>

տարածքը 2016թ. կազմել է 223 կմ²: Երևանի սահմանագիծը ճշգրտվել է Գլխավոր հատակագծի ելակետային տվյալների հավաքագրման ընթացքում, որով Երևան քաղաքի մակերեսը սահմանվել է 224.17 կմ²:

Հատակագծում որպես հիմնական խնդիրներ նշվում են.

- Հատակագծային կառուցվածքի բարեփոխումը՝ տարածական ամբողջականության և տարածքի գործառնական բավարարության ապահովման հաշվեկշռված սոցիալ-տնտեսական զարգացման միջոցով:
- Տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավումը, տրանսպորտային մատչելիության հավասար պայմանների ստեղծումը:
- Միջին և մանր արտադրության գերադասելի զարգացումը՝ բնապահպանական տեխնոլոգիաների կիրառմամբ և հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործմամբ:
- Բնակելի պայմանների բարելավում բնակավայրերի բոլոր մակարդակներում, ազգաբնակչության սպասարկման որակական համակարգի զարգացումը միջրջանային կենտրոնների ստեղծման միջոցով:
- Բնական համալիրի կայունության վերականգնումը և բարձրացումը, բնական միջավայրին հասցվող վնասի կրճատումը, բնակչության առողջության համար էկոլոգիական ռիսկի նվազեցումը:
- Բնակչության պատմամշակութային ժառանգության պահպանումը և բազմապատկումը:
- Բնական ռեսուրսների պահպանումը և կանաչ տարածքների զարգացումը:
- Տարածքի ինժեներական պաշտպանությունն արտակարգ իրավիճակների և բնական աղետների ազդեցության սահմանափակումը:

Նշվում է, որ գլխավոր հատակագիծը կանխատեսական բնույթի փաստաթուղթ է. այն սահմանում է քաղաքի զարգացման ռազմավարությունը հեռանկարով մինչև հաջորդ քաղաքաշինական փաստաթղթի մշակումը՝ հիմնված ժամանակակից վիճակի փաստագրման և պոտենցիալ տնտեսական հնարավորությունների իրական գնահատման վրա:

Գլխավոր հատակագիծը հիմնվում է կայուն զարգացման սկզբունքների վրա՝ պահանջների հաշվեկշռի պահպանում՝ սոցիալական, տնտեսական և էկոլոգիական ոլորտների զարգացման դեպքում: Գլխավոր հատակագիծը չի սահմանում շինարարության ժամկետների և ենթակառուցվածքի զարգացման ստույգ ժամկետներ:

Հատակագծի իրացման գործընթացը դիտվում է որպես հարատև՝ մոնիտորինգի, տենդենցների գնահատման, պահանջների և պահանջարկի անցկացումով, պարբերաբար այն ճշտագրտելով:

Հատակագիծը կազմված է երկու գլխից: Գլուխ I-ը՝ Գրաֆիկական մասը, կազմված է «Հենակետային հատակագիծ», «Ռիսկերի և սահմանափակումների քարտեզ», «Ճանապարհային ցանց և տրանսպորտի կազմակերպման ուրվագիծ», «Ինժեներական ու կոմունալ ենթակառուցվածքների ուրվագիծ», «Լանդշաֆտային կազմակերպման ուրվագիծ», «Տարածքային զարգացման հատակագիծ (հիմնական գծագիր)», «Հողերի

նպատակային նշանակության փոփոխությունների գծագիր», «Համայնքի դիրքը ՀՀ տարաբնակեցման համակարգում» մասերից: Գլուխ II-ը՝ հատակագծի տեքստային մասը, կազմված է «Բացատրագիր», «Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ», «Քաղաքացիական պաշտպանության ինժեներական և արտակարգ իրավիճակների միջոցառումներ», «Պատմամշակութային հուշարձանների պահպանության միջոցառումներ» մասերից:

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ» ԲԱՂԱԴՐԻՉԻ ՌԱԶՎԱՐԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

Երևանի ԿՔԳԾ 2030թ. տեսլական

ա. Երևանում մթնոլորտային օդի որակը կլինի բավարար. քաղաքացիներին կտրամադրվեն լավ կենսապայմաններ, և հնարավորինս կսահմանափակվի բացասական ազդեցությունը բնակչության, էկոհամակարգերի և կլիմայի վրա:

բ. Հիմնվելով աղտոտման աղբյուրների լավ ըմբռնման վրա՝ օդի որակի բարելավումները շարունակաբար կհասցեագրվեն:

Երևանի ԿՔԳԾ ռազմավարական նպատակ (2030թ.)

- Աղտոտիչների հիմնական մակարդակները (մասնիկներ շնչելի օդում, այսինքն՝ PM10-ից PM0.1, ծծմբի օքսիդներ (SOx), ազոտի օքսիդներ (NOx), տրոպոսֆերային (ներքնոլորտային) օզոն (O₃), ամոնիակ (NH₃), բենզո(ա)պիրեն, թունավոր մետաղներ և ածխածնի մենօքսիդ) չեն գերազանցի Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության և վերջինիս «Օդի որակի ուղեցույցների» (ՕՈՈՒ/AQG) կամ «Մաքուր օդ Եվրոպայի համար» ծրագրի պահանջած մակարդակները
- Արտանետումների բոլոր առանցքային աղբյուրները կբացահայտվեն և կկարգավորվեն:
- Կստեղծվի օդի որակի մշտադիտարկման և օդի աղտոտման մոդելավորման ինտեգրված համակարգ, ինչպես նաև օդի աղտոտման ինտերակտիվ առցանց քարտեզ:
- MTT International-ի (ԱՀԿ) օդի որակի չափորոշիչները կանոնավոր կերպով կբավարարվեն

Երևանի մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են շինարարությունը, տրանսպորտը, հանքարդյունաբերությունը, դեգրադացված հողատարածքները, Նուբարաշենի աղբավայրը, արտադրական ձեռնարկությունները:

Երևանի գլխավոր հատակագծի «Շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական ուղղությունները» բաժնում որպես շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական խնդիրներ ընտրվել են հետևյալ ուղղությունները.

- Օդի մաքրություն

- Կենցաղային թափոնների կառավարում՝ Նուբարաշենի աղբավայրի մեկուսացում
- Հանքավայրերի ռեկուլտիվացիա
- Մակերեսային ջրերի մաքրում /Երևանյան լճի և Գետի մասով:

Այս ուղղությունների մեջ չեն նշվում կենսաբազմազանության պահպանման, կլիմայի փոփոխության դեմ պայքարի միջոցառումները:

Հատակագծի «Շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական ուղղությունները» բաժնում Երևան քաղաքում օդի աղտոտվածության դեմ պայքարի միջոցառումներից նշվել են հետևյալները.

- 2023 թվականին փոփոխություններ են իրականացվել Երևան քաղաքի ավազանու 2012 թվականի մարտի 16-ի հ. 405-Ն որոշման մեջ և ավելացվել են նոր լրացուցիչ պայմաններ, համաձայն որի՝ Երևան քաղաքում շենքերի և շինությունների կառուցման աշխատանքների ընթացքում կառուցապատողը պետք է կազմակերպի շինությունների շինարարությանը համապատասխան բարձրությամբ 180 գրամ/քմ խտությամբ ցանցով ծածկումը:
- Կառուցապատողը պետք է կազմակերպի ավազի, գաջի, խիճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների փակ տարածքներում պահեստավորումը կամ անթափանց թաղանթներով ծածկումը, ինչպես նաև կազմակերպի դրանց տեղափոխումը՝ փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով: Եթե համաձայնեցված նախագծի պահանջներով առկա է բետոնի արտադրամասի կառուցում, ապա կառուցապատողը պետք է կազմակերպի տվյալ օբյեկտի բարձրությամբ անթափանց թաղանթով ծածկումը:
- 4-րդ և 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարության ողջ ընթացքում կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում պետք է ապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ: Վերջին կետի համաձայն՝ կառուցապատողները տեղադրել են շինհրապարակներում օդի որակի մոնիթորինգի սարքավորումներ շինհրապարակներում՝ աղտոտման աղբյուրների մոտ և դրանց տվյալներին հնարավոր է հետևել առցանց ռեժիմով Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:⁶ Դա նաև բխում է Երևանի ԿՔԳԾ-ից:
- «Երևանի կայուն քաղաքային տրանսպորտի ներդրում» ծրագրի շրջանակներում Ասիական զարգացման բանկի Հայաստանում մշտական առաքելության կողմից Երևանի քաղաքապետարանին են տրամադրվել օդի որակի 5 մոնիթորինգի սարքավորումներ՝ փոշու և տրանսպորտային

⁶ <https://gis.yerevan.am/portal/apps/dashboards/364e942224b544418ae7ef148fbc9bf1>

աղտոտիչների մոնիթորինգի համար, որոնք 2022 թվականին տեղադրվել են և ավտոմատ եղանակով (յուրաքանչյուր 10 րոպեն մեկ) տրամադրում են տվյալներ: Դրանք արտացոլվում է օնլայն հարթակի վրա: Սարքավորումները նախատեսված են օդում ազոտի երկօքսիդի (NO2) և փոշու (PM2.5 և PM10) քանակությունների չափման համար: Սրանք համարվում են երթևեկության հիմնական աղտոտիչներ և տրանսպորտային համակարգում վառելիքի տեսակի (գազ, դիզել կամ բենզին) փոփոխության հետ մեկտեղ օդում դրանց քանակը էապես փոփոխվում է: Սենսորները սնվում են արևային վահանակների միջոցով:

- Փաստաթղթում նշվում է, որ Երևանի քաղաքապետարանը նախաձեռնել է Երևան քաղաքում չշահագործվող հանքավայրերի փակման և ռեկուլտիվացիայի գործընթաց, որի շրջանակներում գույքագրվել է 15 լքված հանքավայր և նախաձեռնվել է Ջրվեժի գիպսատար կավերի և բազալտի հանքավայրի մացորդային պաշարների զրոյացման, փակման և ռեկուլտիվացիայի ծրագիրը՝ ոլորտի լիազոր մարմինների ՀՀ ՏԿԵ և ՇՄ նախարարությունների հետ համատեղ: Հանքավայրի տարածքի ռեկուլտիվացումից հետո այն կհանդիսանա որպես վերապրոֆիլավորման գոտի բնակելի շրջանների և գործող հանքավայրերի միջև:

Էկոլոգիայի դիտարկումներ

Երևանի ԿՔԳԾ-ով մթնոլորտային օդի որակի վերաբերյալ սահմանված նպատակին՝ հասնելու համար Հատակագծի «Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ» բաժնում նախատեսված միջոցառումները բավարար չեն:

- **Շինարարության ոլորտ**
Երևանի ավագանու որոշման պահանջները՝ փոշու արտանետումների նվազեցման վերաբերյալ, ոչ բոլոր տնտեսավարողներն են պահպանում: Հատակագծում նախատեսված չեն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված մի շարք միջոցառումներ, այդ թվում շինարարական հրապարակների ջրցանման աշխատանքներ, բեռնատարների անվադողերի լվացման աշխատանքներ:
- **Հանքարդյունաբերության ոլորտ**
Հատակագծում 15 ոչ մետաղական լքված հանքերից նշվում է միայն Ջրվեժի գիպսատար կավերի և բազալտի հանքավայրի և դրա մերձակա տարածքների ռեկուլտիվացիայի մասին, ինչը բավարար չէ ոլորտից փոշու արտանետումների կրճատման համար:

Բացի լքված հանքերից, խնդիր է նաև Երևանի վարչական տարածքում ընդերքօգտագործման իրավունք կրող 14 կազմակերպության 17 ոչ մետաղական հանքերից, ինչպես նաև քարի վերամշակման արտադրամասերից

մթնոլորտային օդ արտանետվող փոշու կանխարգելումը: Ընդերքօգտագործման պայմանագրով ընդերքօգտագործողի պարտավորություններից է մթնոլորտի պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների ժառանգար ազդեցությունից: Այս պարտավորությունը պատշաճ չի կատարվում: Ըկերությունների կողմից չեն իրականացվում բնապահպանական միջոցառումներ փոշու արտանետումների մեղմման ուղղությամբ: **Խնդրի կարգավորմանն ուղղված միջոցառումներ հատակագիծը չի նախանշում:**

- **Տրանսպորտի ոլորտ**

«Շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական ուղղությունները» բաժնում տրանսպորտի ոլորտից արտանետումների կրճատման համար նշված չեն միջոցառումներ այն դեպքում, երբ հատակագծի մեկ այլ բաժնում նշվում է, որ Երևանում ավտոմոբիլիզացիան 2024թ. գերազանցել է 2005-2020թթ. գլխավոր հատակագծի նմանօրինակ ցուցանիշը 2.2 անգամ: «2010թ-ին մարդատար ավտոմեքենաներով սպասվող ապահովվածությունը պետք է կազմեր 130 մարդատար մեքենա ամեն 1000 բնակչի համար: Սակայն 2024թ. մարդատար ավտոմեքենաների թվաքանակը, համաձայն Ճանապարհային ոստիկանության ծառայության տվյալների, արդեն կազմել է 313349 միավոր, իսկ ավտոմոբիլիզացիայի մակարդակը՝ 286 մարդատար մեքենա 1000 բնակչի համար», - նշված է հատակագծում:

Հատակագծում ավտոմեքենաների քանակը գրեթե կիսով չափ պակաս է ներկայացված Երևանի 2023թ.գարգացման ծրագրում նշված ցուցանիշից, ըստ որի՝ Երևան քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցների թիվը կազմում է շուրջ 600 000⁷:

Մթնոլորտային օդի մաքրության տեսակետից հատակագծում առկա չեն վիճակագրական տվյալներ ավտոմեքենաների տարիքի և տեխնիկական վիճակի, օգտագործվող վառելիքի տեսակի և քանակի մասին: Տվյալների բացակայության պայմաններում հնարավոր չէ գնահատել տրանսպորտից արտանետումների իրական ծավալը և մշակել դրա մեղմմանն ուղղված միջոցառումներ:

Հատակագծի «Բացատրագիր» բաժնի «Քաղաքի փողոցաճանապարհային ցանց և տրանսպորտի վերաբերյալ» ենթաբաժնում նշվում է, որ քաղաքի մայրուղային փողոցների երկարությունը կազմում է 256.3 կմ, իսկ խտության դեֆիցիտը կազմում է 15-20%: Մայրուղային ցանցի ցածր խտության ցուցանիշը վկայում է նրա անբավարար զարգացման մակարդակի մասին, ինչը, որպես հետևանք, բերում է ցանցի գերբեռնված տրանսպորտային աշխատանքի: Սա էլ իր հերթին բերում է **խցանումների և լրացուցիչ արտանետումների**: Հատակագծով նախատեսվում է փողոցների և ճանապարհների նոր շինարարություն՝ 53.570 կմ, վերակառուցում՝ 8,7 կմ: Նախատեսվում է մայրուղային փողոցների և ճանապարհների գործող ցանցի ընդհանուր երկարությունը

⁷ <https://www.yerevan.am/uploads/media/default/0002/16/637bc0a87d188ee0fa26578328b3924a055666cc.pdf>

հատակագծի հաշվարկային ժամանակահատվածում հասցնել **311.0** կմ, իսկ միջին խտությունը քաղաքի մասշտաբով՝ **2.43** կմ/կմ², ինչը կապահովի հանձնարարելի ցուցանիշ:

Հատկազծում նշված չեն հեծանվագոտիների ստեղծման մասին, ինչը կնպաստեր արտանետումների նվազմանը և կհամապատասխաներ Երևանի ԿՔԳԾ-ով «Տրանսպորտ» ոլորտի «ԵՔ-ն նպատակադրել է 100,000 բնակչի հաշվով ունենալ 50 կմ հեծանվագոտի» ռազմավարական նպատակին:

Ըստ Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության՝ հեծանվագոտիների ստեղծմանս ուղղությամբ քաղաքապետարանն իրականացնում է աշխատանքներ (Հրագրանի կիրճում), որն արտացոլված չէ Երևանի գլխավոր հատակագծում:

Հատակագծում նշված չէ արդեն իսկ տրանսպորտի ոլորտի համար ընդունված որոշումների մասին, որոնք ի թիվս այլ նպատակների, միտված են մթնոլորտային օդ արտանետումների նվազեցմանը: Երևանի կենտրոնի բեռնաթափման, դրանով պայմանավորված մթնոլորտային օդի աղտոտման նվազման համար իրականացվում է Երևանի կենտրոնի բեռնաթափմանն ուղղված համալիր ծրագիրը, որի շրջանակում 2023թ. նոյեմբերի 13-ից Խանջանից մինչև Սարյան և Գրիգոր Լուսավորչից մինչև Կորյուն հատվածներում, որը ներառում է շուրջ 40 փողոց և պողոտա, արգելվել է երթևեկությունը՝ առավելագույն զանգվածը 2.5 տոննա բեռնատարների համար: Սահմանափակումները գործում են առավոտյան ժամը 07:00-ից մինչև 21:00-ը⁸:

Երևանի ավագանու 2023թ. դեկտեմբերի 26-ի 43-Ն որոշմամբ⁹ բարձրացվել են ավտոկայանատեղիների վարձավճարները: Նպատակներից էր բարձր վարձավճարի շնորհիվ Կենտրոն վարչական շրջանի բեռնաթափումը, մթնոլորտային օդի աղտոտվածության մեղմումը: Վարչական դատարանը անվավեր է ճանաչել այդ որոշումը:¹⁰

Հատակագծում մթնոլորտային օդ արտանետումների բոլոր աղբյուրները չեն բացահայտվել և լուծումներ չեն առաջարկվել: Նման նպատակ սահմանված է Երևանի ԿՔԳԾ-ում: Նշենք, որ, ըստ Երևանի 2023թ. զարգացման ծրագրի, Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցություն առաջացնող շուրջ 400 կազմակերպություն¹¹:

Երևանի գոգավոր ռելիեֆի պատճառով օդի լճացումը գետնամերձ շերտում առաջ է բերում վսասակար խառնուրդների կուտակում հատկապես ձմռան ամիսներին, երբ Գեղարքունիքից փչող քամիները դադարում են, ինչը վատթարացնում է քաղաքի էկոլոգիական իրավիճակը: Քաղաքի օդափոխության համար լուծում առաջարկված չէ

⁸ <https://www.yerevan.am/hy/news/noyemberi-13-its-erewani-kentronowm-zhame-07-00-its-minch-ew-21-00-n-kargelvi-berhnatarneri-ert-ewek/>

⁹ <https://www.yerevan.am/hy/elders-decisions/43-n-1/>

¹⁰ <https://www.azatutyun.am/a/datarann-anvaver-e-chanachel-karmir-gtseri-tankatsman-dem-oroshoumy-erevani-kaghakapetarany-boghokarkelou-e/33245952.html>

¹¹ <https://www.yerevan.am/uploads/media/default/0002/16/637bc0a87d188ee0fa26578328b3924a055666cc.pdf>

այս տեսանկյունից: 2024թ. դեկտեմբեր ամսին օրեր շարունակ Երևանը թունավոր մշուշի մեջ էր: Աշխատանքային հերթական խորհրդակցության ժամանակ Երևանի քաղաքապետին զեկուցվել է այս խնդրի մասին: Քաղաքապետը հանձնարարել է երկամսյա ժամկետում մշակել քառամյա համապարփակ ծրագիր՝ բոլոր հնարավոր կետերով: «Պետք է մշակվի քառամյա ծրագիր, որը կներառի ընդհանուր կոնցեպտուալ առաջարկներ՝ օդի որակի բարելավման տեսակետից. ծառատունկ, անտառատունկ՝ թվային հստակ ցուցանիշներով, որոշակի սահմանափակումներ՝ Երևանում ժամկետանց ավտոմեքենաների շահագործման համար, որոնք մեծ աղտոտիչներ են, և մի շարք այլ ուղղություններ, որոնց առումով Երևանի քաղաքապետարանն ունի լիազորություն՝ գործուն քայլեր իրականացնելու համար», - ասել է քաղաքապետը¹²:

Ըստ Երևանի քաղաքապետարանի բնապահպանական վարչության՝ օդի որակի բարելավմանն ուղղված ոչ բոլոր գործողություններն են ներկայացված գլխավոր հատակագծում: Ներկայում մշակվող Երևան քաղաքում օդի աղտոտվածության նվազեցման քառամյա պլանը լինելու է առանձին ռազմավարական փաստաթուղթ այդ խնդրի լուծման համար: Երևան քաղաքում տրանսպորտային արտանետումների վերաբերյալ Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվել է մանրամասն վերլուծություն, որը կօգտագործվի օդի աղտոտվածության քառամյա պլանի մշակման աշխատանքներում:

Երևանը դեռևս չի հասել մաքուր մթնոլորտային օդ ունենալու ԿՔԳԾ ռազմավարական նպատակին:

Հատակագծում թերևս միակ անդրադարձը Երևանի ԿՔԳԾ-ին վերաբերում է ԿՔԳԾ-ի հետևյալ ռազմավարական նպատակին. «Կստեղծվի օդի որակի մշտադիտարկման և օդի աղտոտման մոդելավորման ինտեգրված համակարգ, ինչպես նաև օդի աղտոտման ինտերակտիվ առցանց քարտեզ»: Այս առնչությամբ նշված է, որ կառուցապատողները տեղադրել են շինհրապարակներում օդի որակի մոնիթորինգի սարքավորումներ՝ աղտոտման աղբյուրների մոտ և դրանց տվյալներին հնարավոր է հետևել առցանց ռեժիմով Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում¹³ և որ դա նաև բխում է Երևանի Կանաչ քաղաք գործողությունների ծրագրից:

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ԹՍՓՈՆՆԵՐ» ԲԱՂԱԴՐԻՉԻ ՌԱԶՎԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

Երևանի ԿՔԳԾ 2030թ. տեսլական

¹² <https://www.yerevan.am/hy/news/myasnikyan-poghotayin-ew-lvovyan-p-oghots-in-harogh-showrj-30-ha-taratsk-owm-khimnvi-k-aghak-ayin-no/>

¹³ <https://gis.yerevan.am/portal/apps/dashboards/364e942224b544418ae7ef148fbc9bf1>

ա. Քաղաքը կսպասարկվի թափոնների կառավարման ժամանակակից ինտեգրված համակարգի կողմից, որը կկիրառի միջազգային չափորոշիչներ՝ Երևանն ուղղորդելով դեպի նյութապես արդյունավետ տնտեսություն:

բ. Երևանը գրավիչ կդառնա թափոնների կառավարման նորագույն տեխնոլոգիաներ կիրառող ընկերությունների, ինչպես նաև սպասարկման հարակից ոլորտների համար:

Երևանի ԿԲԳԾ ռազմավարական նպատակներ (2030թ.)

- Գոյացած ԲԿԿԹ-ների և այլ թափոնների 100%-ը կտեղադրվի թափոնների տնօրինման կամ թափոնների մշակման պատշաճ օբյեկտներում և կկառավարվի ԵՄ չափորոշիչներ ի համաձայն:
- ԲԿԿԹ-ներ և այլ թափոններ գոյացնողների 99%-ից ավելին կվճարի համապատասխան պարտադիր վճար աղբի հավաքման և հեռացման համար
- Տեսակավորման և վերամշակման ինտեգրված համակարգը հասույթները կվերադարձնի ԲԿԿԹ-ների կառավարման համակարգին (ԲԿԿԹ-ների կառավարման ծախսերի 20 %-ից ավելին՝ տարեկան):
- Ազգային կոդավորման համակարգի համաձայն՝ ներդրված կլինի հանրությանը մատչելի տվյալների շտեմարան՝ գոյացած և տնօրինված ԲԿԿԹ-ների և այլ թափոնների վերաբերյալ
- Քաղաքացիների համար հաճախ կանցկացվեն տեղեկատվական և իրազեկման քարոզարշավներ՝ թափոնների կառավարման ոլորտի զարգացումների ու ձեռքբերումների, ինչպես նաև թափոնների գոյացման կրճատման վերաբերյալ

Երևանի գլխավոր հատակագծի «Շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական ուղղությունները» բաժնում որպես շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական խնդիր ընտրվել է «կենցաղային թափոնների կառավարում՝ Նուբարաշենի աղբավայրի մեկուսացում խնդիրը: Հատակագծում այս խնդրի առնչությամբ նշված է. «Նուբարաշենի աղբավայրի մեկուսացումը և փակումը հանդիսանում է աղբավայրում տիրող ներկայիս իրավիճակի բարելավման, ինչպես նաև չեզոքացման առումով օպտիմալ լուծման տարբերակներից մեկը: Դա դիտարկվում է թափոնների կառավարման համալիր ծրագրի համատեքստում, որը կներառի նոր սանիտարական աղբավայրի կառուցում, աղբի տեսակավորում և վերամշակում:

ԵՄ կողմից՝ ֆինանսավորվող «Երևան, Վարշավա Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերների շուրջ» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքին են տրամադրվել թվով 930 նոր թափոնամաններ և դրանց սպասարկման համար 2 նոր բեռնատար մեքենա, ընդլայնվել են տեսակավորման թափոնամանների հասցեները և վերամշակվող թափոնների տեսակները (թուղթ, պլաստիկ, ապակի, ալյումինե տարաներ):

Թափոնների կառավարման ոլորտում Երևանի քաղաքապետարանը դիտարկում է համայնք-մասնավոր համագործակցության ձևաչափը: Երևանի քաղաքապետարանը ստանում է թափոնների վերամշակման վերաբերյալ բազմաթիվ առաջարկներ քաղաքապետարանի սահմանած ձևաչափով, որոնց իրագործելիության հետ կապված, քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների մասնագետների կողմից իրականացվում են տարատեսակ աշխատանքներ և քննարկումներ: Երևանի քաղաքապետի կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Երևան քաղաքում՝ թափոնների կառավարմանն առնչվող հիմնահարցերի քննարկման, ստացվող առաջարկների իրագործելիության գնահատման, ինչպես նաև ոլորտի առաջնահերթությունները սահմանելու նպատակով: Համաշխարհային Բանկի կողմից իրականացվում է ոլորտի մանրամասն ուսումնասիրություն և առաջիկայում կներկայացվի ծրագրային առաջարկ»:

ԿՔԳԾ մյուս ռազմավարական նպատակների առնչությամբ հատակագծում դիտարկումներ չկան:

Էկոլուրի դիտարկումներ

Անորոշ է նոր սանիտարական աղբավայրի կառուցման և Նուբարաշենի աղբավայրի ռեկոլտիվացման ժամկետը: Այս խնդրի լուծումը Երևանի ԿՔԳԾ-ի կարճաժամկետ միջոցառումներից առաջինն էր և պետք է կատարվեր 2018-2022թթ. ընթացքում: Սակայն այն դեռևս չի կատարվել: Երևանը չի հասել սահմանված նպատակին:

Հատակագծում նշվող «Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերների շուրջ» ծրագրի շրջանակներում Երևանում ակնկալվում է թափոնների հավաքման հասցեները 135-ից հասցնել 300-ի, թափոնամանները՝ 1200-ի:

2020թ-ից սկսած ծրագրի իրականացման արդյունքում յուրաքանչյուր տարի 30 տոննա պլաստիկ ու 30 տոննա ապակի, շուրջ 600 տոննա թուղթ տեսակավորվել է և վերամշակման ուղարկվել: «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կանխատեսումներով՝ թափոնամանների քանակի ավելացման արդյունքում տարեկան 50 տոննա պլաստիկ, 50-60 տոննա ապակի և 1000 տոննա թուղթ կտեսակավորվի և կուղարկվի վերամշակման¹⁴:

Չնայած իրականացվող աղբի տեսակավորման միջոցառումներին՝ դրանք բավարար չեն: Թափոնների տեսակավորումը կամավոր միջոցառում է, և ոչ բոլորն են տեսակավորում:

Հաշվի առնելով, որ տարեկան Նուբարաշենի աղբավայրում կուտակվում է 600 000 տոննա թափոն, ապա 2020թ-ից սկսած աղբավայր չի մտնում տեսակավորված ապակու, պլաստիկի և թղթի ընդհանուր թափոնների 0,11%-ը: Անգամ եթե այս թափոնների տեսակավորման ծավալներն ավելանան՝ հասնելով, ըստ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի

¹⁴ <https://www.ecolur.org/hy/news/waste/15354/>

կանխատեսումների, ընդհանուր շուրջ 1110 տոննայի, ապա ցուցանիշը կկազմի 0,185%: Այսպիսով, Երևանը չի հասնում ԿԲԳԾ-ով նախանշված ո՛չ միջնաժամկետ թիրախին, որն է. «ՔԿԿԹ-ների վերամշակման ցուցանիշը կկազմի 15%-ից ավելի, այլ թափոնների համար՝ 30%», ոչ էլ երկարաժամկետ թիրախն: Այս ուղղությամբ հատակագծում նշված քայլերը հստակ չեն, չկա խնդրի համակարգային կարգավորման ծրագիր:

Ըստ Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության՝ Երևանի ԿԲԳԾ-ում սահմանված թափոնների վերամշակման ցուցանիշներին հնարավոր է հասնել թափոնների տեսակավորման կայանի և վերամշակման գործարանի շահագործման պայմաններում, որի երկփուլ մրցույթը Երևանի քաղաքապետարանի կողմից կհայտարարվի 2025թ. փետրվար ամսին:

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ՋՈՒՐ» ԲԱՂԱԴՐԻՉԻՆ

2030թ. տեսլական

- ա. Արդյունավետ կմատակարարվի խմելու ջուր՝ համակարգի նվազագույն կորուստներով:
- բ. Երևանը կունենա ջրի ոլորտի կայուն կառավարում՝ ապահովելով արդյունավետ ջրամատակարարում և կեղտաջրերի մաքրում, Երևանից դուրս եկող կոյուղաջրերը կմաքրվեն միջազգային չափորոշիչների համաձայն, և մուտքային ջրում աղտոտիչների կոնցենտրացիան կհամապատասխանի ազգային չափորոշիչներին:
- գ. Հրազդան գետը կդարձնի խիստ գրավիչ վայր ինչպես տեղի բնակիչների, այնպես էլ զբոսաշրջիկների հանգստի համար:

Ռազմավարական նպատակ (2030թ.).

- Արձանագրել 50%-ից պակաս չհաշվառված ջրի ծավալի մակարդակ
- Ջրի ենթակառուցվածքների քաղաքաշինական հատակագիծը կդառնա Երևան քաղաքի Գլխավոր հատակագծի մաս
- Ջրամատակարարման համակարգի վերականգնման և կենտրոնացված կոյուղու համակարգի ընդարձակման տեխնիկատնտեսական հիմնավորումը կպատրաստվի և կդառնա ռազմավարական փաստաթուղթ ապագա շինարարական աշխատանքների համար
- «Ջրամատակարարման խողովակաշարերի վերականգնում և կենտրոնացված կոյուղու համակարգի ընդարձակում» մրցութային փաստաթղթերի պատրաստումը՝ հիմնվելով Գլխավոր հատակագծի և տեխնիկատնտեսական հիմնավորման վրա

- Մրցութային փաստաթղթերի պատրաստում կեղտաջրերի մաքրման կենտրոնական կայանի արդիականացման համար՝ կենսաբանական մաքրման բաժինների ներառման նպատակով
- Որպես ջրի ոլորտի ինտեգրված կառավարման պլանի մաս, կգնահատվի և քննության կառնվի կեղտաջրերի մաքրման կենտրոնական կայանի մաքրված ջրի կրկնակի օգտագործումը, որպես այլընտրանքային ջրային ռեսուրս ռոռզման, արդյունաբերության ոլորտի և այլնի համար
- Ներդրված կլինի մակերևութային ջրերի որակի մշտադիտարկման ծրագիր, որը կօգտագործվի գործառնական կառավարման, ռազմավարական պլանավորման նպատակներով:

Ըստ հատակագծի՝ ներկայում Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգի հիմնական տեխնիկական տվյալներն են.

- արտադրվող ջրաքանակը 11.73 մ³/վրկ. է, որի 48%-ը տրվում է պոմպերով
- ջրատարների և բաշխիչ ցանցերի երկարությունը 2250 կմ, որից 1000 կմ-ի տարիքը գերազանցում են 30 տարին և ենթակա են վերակառուցման
- համակարգն ունի 103 կապտաժային ջրառներ, 81 արտեզյան ինքնաբուխ և 30 խորքային պոմպերով հորատանցքեր
- օրվա կարգավորման ջրամբարները տեղակայված են 23 կետերում, գումարային 306.4 հազ. խոր. մ. ծավալով. այս ջրամբարներից առնվազն 96.5 հազ. խոր. մ. ծավալով ջրամբարները գտնվում են վթարային վիճակում
- հոսակորուստների մակարդակը 76% է
- ջրամատակարարուիս իրականացվում է օրական 4-14 ժամ գրաֆիկով 2003թ-ից կատարվում են աշխատանքներ, ինչի շնորհիվ շուրջօրյա ջրամատակարարմամբ ապահովվել է բնակչության 44%-ը
- Համաշխարային բանկի առաջին վարկային ծրագրով ստեղծվում է ջրի ծախսի հաշվառման համակարգ և կատարվում աշխատանքներ Նոր- Նորք, Կենտրոն և Արաբկիր համայնքների ջրի բաշխիչ ցանցերի գոտիավորման ուղղությամբ:

Երևանի գլխավոր հատակագծի «Շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական ուղղությունները» բաժնում որպես շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական խնդիր ընտրվել է «Մակերեսային ջրերի մաքրում /Երևանյան լճի և Գետի մասով» խնդիրը: Այս խնդրի առնչությամբ հատակագծի նույն բաժնում, մասնավորապես, նշվել է. «Երևանյան լճի տարածքում իրականացվել է ափամերձ տարածքների ջրային հատվածի և ափի մաքրման աշխատանքներ կենցաղային կոշտ թափոններից և Հրազդան գետի վրա տեղադրվել է աղբառոսիչ ճաղավանդակ: Երևանյան լճից տեղափոխվել է շուրջ 650 մեքենա աղբ, որը կազմում է 13000 խորանարդ մետր: 2022 թվականին մեկնարկել են Երևանյան լճի մաքրված հատվածներում նոր հանրային զբոսայգու կառուցման աշխատանքները, որոնք ավարտվել են 2024 թվականին:

Բնապահպանության վարչության կողմից իրականացվեց Երևանյան լճում և Հրազդան գետում մաքրման ենթակա տարածքների քարտեզագրման աշխատանքներ, որի համաձայն մաքրման ենթակա տարածքները կազմում են շուրջ 15 հա:

Նույն ծրագրի շրջանակներում 2022 թվականին Հրազդան գետի վրա տեղադրվեց աղբաորսիչ ճաղավանդակ: Եվս 2 աղբորսիչ ճաղավանդակ կտեղադրվի 2024թ., աշխատանքները ընթացքի մեջ են:

2023 թվականին իրականացվել են Հրազդան գետի հունի մաքրման աշխատանքներ: Մաքրվել է շուրջ 10.000 խմ աղբ:

Հրազդան գետի հունի մաքրման աշխատանքները շարունակվում են այս տարի: Ընդհանուր առմամբ կմաքրվի շուրջ 9000 խմ աղբ:

Հրազդան գետի հունի և Երևանյան լճի մաքրման աշխատանքները շարունակելի են»:

Էկոլոգիայի դիտարկումներ

Հատակագծի «Ելակետային տվյալներ» ենթաբաժնում ներկայացված են ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ մի շարք խնդիրներ, որոնք իրենց արտացոլումը չեն գտել հատակագծի «Շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական ուղղությունները» բաժնում:

Մասնավորապես, խմելու և արտադրական նպատակներով ջրի պահանջարկն ավելանալու է: Խմելու որակի ջրի պահանջարկը փաստացի **254.563 հազար** մ³/օր-ից հեռանկարում կհասնի **330.932 հազար** մ³/օր-ի: Արտադրական կարիքների համար՝ տեխնիկական որակի ջրի պահանջարկը փաստացի **50.889 հազար** մ³/օր-ից հեռանկարում կհասնի **66.156 հազար** մ³/օր-ի:

Նշենք, որ Կլիմայի փոփոխության 4-րդ ազգային հաղորդագրության¹⁵ համաձայն՝ կանխատեսվում է ջրային ռեսուրսների նվազում, ինչին ակնատես ենք լինում այսօր: Խմելու ջուրը չի բավարարում քաղաքի պահանջարկին, այդ պատճառով որոշ վարչական շրջաններում «Վեոլիա ջուր» ընկերությունը քաղցրահամ ջրերին արտեզյան ջուր է խառնում, որպեսզի բավարարի պահանջարկը՝ պահպանելով խմելու ջրի համար սահմանված նորմերը: Մայրաքաղաքի բնակչության 44%-ն է ապահովված շուրջօրյա ջրամատակարարմամբ: Դրան գումարվել է Երևանի կառուցապատման համար ձևավորվող պահանջարկը:

Խմելու ջրի պահանջարկի ավելացումը սպասվող սակավաջրության պայմաններում հատակագծում չի դիտարկվել որպես խնդիր և դրա հաղթահարման ուղղված լուծումներ չեն ներկայացվել: Խնդրի լուծումը Երևանի քաղաքապետարանի լիազորություններից դուրս է:

Ըստ հատակագծի՝ Երևանի խմելու ջրամատակարարման 13 ջրաղբյուրներից 5-ի՝ Արզականի, Գյումուշի, Արզնի, Ծարավ աղբյուրի, Գետամեջի շահագործման պաշարները հաստատված չեն: 3 ջրաղբյուրի՝ Գառնիի, Ապարանի, Կաթնաղբյուրի դեպքում նշվում է վերանայման կամ վերազնահատման անհրաժեշտության մասին:

¹⁵ https://cc-armenia-production.s3.eu-central-1.amazonaws.com/Content/announcements/11676/FNC_Arm.pdf

Միայն 2 ջրաղբյուրի՝ Ձորաղբյուրի և Երևանյան ՀԷԿ-ի աղբյուրների պաշարներն են հաստատված: Առինջի դեպքում նշվում է, որ հանքավայրը կարելի է պահեստավորել՝ խիստ անհրաժեշտ պայմանների համար: Շոր-Շորի դեպքում նշվում է, որ անհրաժեշտ է վերանայել նրա օտագործման նպատակահարմարությունը Երևանի խմելու ջրամատակարարման համար: Գայ-Հայկաշեն Առաքելյան I-II, III-IV հերթ)-ի համար ընդհանրապես ոչինչ չի նշվում:

Ջրառն իրականացվում է անորոշության պայմաններում, ինչը ռիսկեր է պարունակում ջրային ռեսուրսի հյուծման, էկոլոգիական հավասարակշռության պահպանման, քաղաքի ջրի պահանջարկի բավարարման տեսանկյունից:

Ըստ հատակագծի՝ ներկայում Երևան քաղաքի ավելի քան 97%-ն ընդգրկված է կոյուղու ցանցում: Ցանցը հիմնականում կառուցված է ցածր որակի խողովակներով, բազմաթիվ շինարարական թերություններով: Բացի այդ, կոյուղու հավաքող ցանցերի, որոնց երկարությունը շուրջ 1200 կմ է, ավելի քան 30%-ի տարիքը 30 տարուց ավելի է, և դրանք արդեն սպառել են իրենց աշխատանքային ռեսուրսները: Կոյուղու հավաքող ցանցերից արտահոսքի մեծությունը չի վերահսկվում և արտահոսող կեղտաջրերը վարակում են քաղաքի ամբողջ տարածքը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ վարակի տարածման համար: Չափման համակարգի բացակայության պատճառով արտահոսքի իրական մեծությունը առ այսօր որոշված չէ: Կոյուղու հավաքող ցանցի անկատարության պատճառով քաղաքի տարածքի շուրջ 50-60 կետերում կեղտաջրերը առանց որևէ մշակման թողնվում են Ջրվեժ, Ողջաբերդ, Գետառ, Հրազդան գետեր և այլ բազմաթիվ ձորակներ: Ցանցերը բազմաթիվ կետերում միացված են հեղեղատար կոյուղուն, որի պատճառով անձրևների և ձնհալքի ժամանակ անձրևաջրերը մուտք են գործում կոյուղու ցանց և հասնում ԿՄԿ, իսկ չոր եղանակին կոյուղագծերը հեղեղատար կոյուղու ցանցով առանց մաքրման թափվում են ջրավազանները (գետերը):

Որպես եզրահանգում հատակագծում նշվում է, որ ԿՄԿ-ն անհրաժեշտ է վերակառուցել - վերանորոգել: ԿՄԿ վերակառուցման ժամանակ անհրաժեշտ է կիրառել մաքրման ամենավերջին տեխնոլոգիաները և սարքավորումները: Կոյուղու ցանցի աշխատունակությունը պահպանելու և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ պատշաճ վիճակը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել անընդհատ մեծածավալ աշխատանքներ հոսակորուստների հայտնաբերման, վերացման և մաքրման կայանի վերանորոգման ուղղությամբ: Սրան զուգահեռ հատակագծի տեխնիկական ցուցանիշներում նշվում է, որ կեղտաջրերի ընդհանուր ծավալը փաստացի **394.0 հազար** մ³/օր-ից հեռանկարում կհասնի **512.2 հազար** մ³/օր-ի: Մինդեռ հաջորդ տողում մաքրման ենթարկված կեղտաջրերի ընդհանուր ծավալը փաստացի նշվում է **480.000 հազար** մ³/օր, իսկ հեռանկարայինը՝ **624.000 հազար** մ³/օր: Ըստ այս ցուցանիշների ստացվում է, որ ավելի շատ կեղտաջուր է մաքրվում, քան առաջանում է: Սակայն իրականում Երևանը կեղտաջրերի պատշաճ մաքրում չի ապահովում: Երևանի «Աերացիա» մաքրման կայանը մասամբ է կատարում մեխանիկական մաքրում, կայանի ճաղավանդակային հատվածը որսում է խոշոր աղբը: Կեղտաջրերը հոսում են Հրազդան գետ:

Պաշտոնական տվյալներով՝ «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի միջոցով տարեկան Հրազդան գետ է լցվում 55 մլն խմ կեղտաջուր: Երևան քաղաքից դուրս գալուց հետո Հրազդան գետը հիմնականում ունի 5-րդ դասի ամենաբարձր աղտոտվածություն:

Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի տարածքում 2015-2016թթ-ին կառուցվեց կեղտաջրերի մեխանիկական մաքրման նոր կայան Հայաստանի և Ֆրանսիայի կառավարությունների միջև կնքված [Ֆինանսական արձանագրության](#) շրջանակներում: Կայանը չունի ավարտական ակտ և չի շահագործվում:

Հատակագծի «Ելակետային տվյալներ» ենթաբաժնում նշվում է, որ ստորերկրյա ջրերի պահպանության ընդհանուր հարցում աղտոտման վտանգն ավելի մեծ է, քան այդ ջրերի անբավարար ծավալը և նշվում է, որ ներկա աշխատանքում նկարագրվում են այն անհրաժեշտ հիդրոերկրաբանական աշխատանքները, որոնք կոչված են հետագա տարիների ընթացքում պահպանելու Երևան քաղաքի խմելու ջրի ջրաղբյուրները: Սակայն հատակագծի ենթաբաժիններն այս ուղղությամբ իրականացվելիք աշխատանքներին չեն անդրադառնում: Իսկ «Ջրաղբյուրների պահպանումը սպառումից և աղտոտումից» ենթաբաժնում, որտեղ պետք է հստակ միջոցառումների նշվեին, պարզապես նշված է. «Երևան քաղաքի ջրամատակարարումն ապահովող աղբյուրներից ոչ մեկի համար սանիտարական երկրորդ գոտու սահմանները որոշված չեն»:

Հատակագծում նշված է, որ 25 կետերում տեղակայված 326 հազ. խմ ծավալով օրվա կարգավորման ջրամբարներից 7-ը կա՛մ վթարված են, կա՛մ այլ պատճառներով չեն շահագործվում: Այս ջրամբարների գործարկման նպատակահարմարության կապակցությամբ կատարվում է ուսումնասիրություն:

Խնդրի կարգավորումը ուսումնասիրությունների մակարդակից չի անցնում հատակագծում:

Ըստ հատակագծի՝ հեղեղատար համակարգի շահագործումը ֆինանսական միջոցների սակավության պատճառով ներկայում իրականացվում է շատ ցածր մակարդակով, իսկ վերջին 10-15 տարիների ընթացքում ցանցերի շահագործումը լրիվ աչքաթող է արված: Ավելի քան տասը տարի վատ շահագործելու հետևանքով ցանցը տեղ-տեղ խցանված է բերվածքներով:

Որպես Երևան քաղաքի անձրևաջրերի և հալոցքի ջրերի ջրընդունիչ ծառայում են քաղաքի տարածքով անցնող հիմնական երեք գետերը և բազմաթիվ ձորակները, որտեղից էլ կեղտաջրերը թափվում են նույն գետերը:

«Չնայած վերջին 20-30 տարիների ընթացքում չեն կատարվել լուրջ հետազոտություններ ուղղված Երևանամերձ տարածքներում հեղեղառաջացմանը, սակայն կարելի է նշել, որ հեղեղների վտանգը զգալի նվազել է՝ շնորհիվ պոտենցիալ հեղեղ առաջացնող տարածքների կառուցապատման, կանաչապատման,

հեղեղատարների հունների բարեկարգման, թողունակության մեծացման և այլն»,- նշված է հատակագծում: Մինչդեռ Երևանում 2024թ. գարնանն ու աշնանը տեղացած ինտենսիվ անձրևների արդյունքում առաջացան հեղեղներ, որոնք մեծ վնաս պատճառեցին Երևանի բնակիչներին:

Ըստ հատակագծի «Ջրամատակարարում» ենթաբաժնի՝ հոսակորուստների մակարդակը 74% է: Դրանց կրճատման ուղղված հստակ միջոցառումներ հատակագծում չեն նշվում:

ԿՔԳԾ—ի ռազմավարական նպատակների և հատակագծի ջրի բաժնի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԿՔԳԾ-ի նպատակները չեն դիտարկվել հատակագծում:

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ» ԲԱՂԱԴՐԻՉԻՆ

2030թ. տեսլական

Քաղաքապետարանը կենսաբազմազանությունը կհամարի իր քաղաքաշինության անբաժանելի մասը և նպատակ կդնի պահպանել կենսաբազմազանության հարստությունը, որը Հայաստանը և Երևանը դարձնում է աշխարհի կենսաբազմազանության կենտրոններից մեկը:

Ռազմավարական նպատակ 2030

Բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը մեկ բնակչի հաշվով >10 մ

2024թ. դրությամբ Երևանում բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը մեկ բնակչի հաշվով, ըստ հատակագծի, 8,3քմ է: Այս ցուցանիշը մոտ է ԿՔԳԾ-ով սահմանված կարճաժամկետ թիրախին, ըստ որի 2022թ. 1 շնչին բաժին ընկնող կանաչ տարածքը պետք է հասցվեր 8,5 քմ-ից ավելի տարածքի, իսկ 2030թ-ի համար՝ 10 քմ-ից ավելի:

2005-2020թթ. հատակագծով նախատեսված էր այդ ցուցանիշը հասցնել 17 քմ-ի, հանրային կանաչ տարածքները լրացուցիչ ընդլայնելով ավելի քան 1,300 հա-ով, ինչի արդյունքում մինչև 2020թ-ը ընդհանուր մակերեսը պետք է կազմեր 2,382 հա: Նախորդ հատակագիծը նաև նախատեսել էր քաղաքի շուրջը 876 հա կանաչ պատնեշի (բուֆերային գոտու) վերստեղծում, ինչը համապատասխանում է միջազգային նորմերին, որոնք մինչև մեկ միլիոն բնակիչ ունեցող քաղաքների շուրջը պահանջում են անտառապատ օղակ 50 կմ շառավղով, ինչը ևս չի արվել: Պատճառներից են ինչպես բավարար ֆինանսների բացակայությունը, այնպես էլ տնկարկների ստեղծման համար նախանշված որոշ հողամասերի այլևս հասանելի չլինելը, որոշների աղտոտված կամ էրոզիայի ենթարկված լինելը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված 1 շնչին բաժին ընկնող նվազագույն կանաչ տարածքի նվազագույն արժեքը՝ 9 քմ է, իսկ օպտիմալը համարվում է 50քմ-ն:

Ըստ նոր հատակագծի՝ վերջին տվյալներով Երևանի կանաչ տարածքները պաշտոնապես կազմում են շուրջ 6760 հա (2023թ.), ինչը քաղաքի ընդհանուր մակերեսի 30%-ն է: Այս ցուցանիշը համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների, պետք է լինի առնվազն 40%: Մրա մեջ մտնում են ընդհանուր և սահամանափակ օգտագործման և հատուկ նշանակության կանաչ տարածքները: Ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է շուրջ 906.8 հա: Այն կազմում է կանաչ տարածքի 12,8 %-ը, սակայն պետք է լինի առնվազն 25 %: Այն շատ չնչին, սակայն ավելացել է վերջին 9 տարիների ընթացքում: Երևանում առկա կանաչ տարածքները ոչ միշտ են լավ փոխկապակցված, ինչը կարող է լրացուցիչ խոչընդոտ ստեղծել կենսաբազմազանության պահպանման համար:

Աղյուսակ 1. Երևան քաղաքի կանաչ տարածքի ավելացումը սկսած 2015թ-ից

hh	Տարի	Կանաչ տարածքներ
		Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ (հա)
1	2015	861.0
2	2016	863.0
3	2017	864.5
4	2018	867.3
5	2019	867.5
6	2020	871.3
7	2021	873.8
8	2022	887.7
9	2023	906.8

Մեկ բնակչին բաժին ընկնող կանաչ տարածքը շուրջ 10 քմ թիրախին հասցնելու համար, ըստ հատակագծի, Երևան քաղաքի զարգացման միամյա և հնգամյա ծրագրերով նախատեսված է Դավմայի այգիների 230 հա տարածքում նոր համայնքային զբոսայգու ստեղծում: Նախատեսվում են նաև անտառապաշտպանիչ գոտիների ստեղծում Նուբարաշենում (8.5 հա), Սիլիկյան թաղամասում (7 հա), Նոր Նորքում (Ջրաշխարհից դեպի Կենդանաբանական այգի- 12 հա), Նորք-Մարաշում (նախկին Նորքի այգիներ-10 հա):

Նշենք, որ «Շրջակա միջավայրի վիճակի բարելավման հիմնական ուղղությունները» ենթաբաժնում Երևանի կանաչ տարածքների ավելացման և պահպանման, կենսաբազմազանության պահպանմանն ուղղված միջոցառումների անդրադարձ չկա:

Երևանի քաղաքի գլխավոր հատակագծի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների համաձայն՝ Երևանի տարածքը փաստացի 22.417 հազ. հա է և հեռանկարում չի փոխվի:

Գյուղատնտեսական հողերի ցանկում բազմամյա տնկարկները 0.387 հազ հա են, հեռանկարային տվյալները բացակայում են: Հեռանկարում Երևանը կունենա 0.195 հազ. հա մակերեսով բնապահպանական տարածք, այդ թվում՝ 0.060 հազ. հա արգելոց, 0.134 հազ. հա ազգային պարկ: Անտառը փաստացի 0.822 հազ հա-ից պետք է հեռանկարում հասցվի 0.858 հազ. հա-ի: Պաշտպանիչ անտառաշերտերի, կանաչ տարածքների մասին տվյալներ նշված չեն, ինչպես նաև նշված չեն անտառվերականգնման աշխատանքների ծավալները:

Նոր հատակագծով Երևանը իրականացվելիք միջոցառումների հաշվին ձգտելու է հասնել 10քմ-ի մեկ շնչի համար, ինչը ԿՔԳԾ-ի ռազմավարական նպատակին համահունչ է:

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱ» ԲԱՂԱԴՐԻՉԻՆ

2030թ. տեսլական

ա. Երևանը կունենա էներգիայի և ածխածնի փոքր «ոտնահետք», կնպաստի ազգային էներգետիկ անվտանգության ամրապնդմանը, էներգասպառումը ինամքով կմշտադիտարկվի, կպլանավորվի և կկառավարվի, ինչը թույլ կտա կայացնել տեղեկացված որոշումներ և օգտագործել էներգաարդյունավետության նորարարական լուծումներ:

բ. Բոլոր նոր կառուցվող շենքերում և վերակառուցման նախաձեռնություններում կկիրառվեն «գրեթե զրոյական» էներգասպառման սկզբունքներ, ցածր «ածխածնային ոտնահետք» և «կանաչ» ճարտարապետության մոտեցումներ: Քաղաքը էներգաարդյունավետության և էներգետիկ ծառայությունների ֆինանսական մատչելիության բարձրացման համար բնակելի շենքերի հատվածում կունենա արդյունավետ մեխանիզմ

գ. Քաղաքն իր կառուցապատված միջավայրում կխթանի և կներկայացնի «կանաչ» շինարարության լուծումներ և վերականգնվող տեխնոլոգիաներ, այդ թվում՝ էներգետիկ համակարգերի համար «խելացի» տեխնոլոգիաներ՝ ուշադրությունը կենտրոնացնելով իր քաղաքացիների կյանքի որակի բարձրացման վրա:

Երևանի ԿՔԳԾ ռազմավարական նպատակներ (2030թ.)

- Հասնել CO₂-ի արտանետումների 30% կրճատման՝ 2012թ. էլակետի համեմատ՝ համաձայն կլիմայի և էներգետիկայի ոլորտներում թարմացված «Քաղաքապետների դաշնագրի»:
- Հասնել հանրային շենքերում միջին էներգասպառման 20%-ով կրճատման
- Հաստատված կլիմայի շարունակական խթանման ծրագիր՝ օժանդակելու բնակելի շենքերի էներգաարդյունավետության՝ հանրայնացման և փոքրածավալ ցուցադրական նախագծերի միջոցով:
- Սահմանված կլիմայի ընդլայնելի մեխանիզմ՝ բնակելի շենքերի ԷԱ նպատակով ներդրումներ ներգրավելու համար, կօգտագործվեն համայնքային մասնավոր գործընկերություններ էներգաարդյունավետության ներդրումների համար:
- Օգտագործել ՊՄԳեր՝ պետական հատվածում ԷԱ ներդրումների համար:
- Հասնել քաղաքի էներգասպառման մեջ ՎԷԱ-ների 20% մասնաբաժնի:
- Բնակելի շենքերի ԷԱ համար ներդրումներ ներգրավելու նպատակով կսահմանվի ընդլայնելի մեխանիզմ:
- Ավարտված կլիմայի Երևանի փողոցների լուսավորության համակարգի արդիականացումը, այդ թվում՝ մայրուղիների, պողոտաների, փողոցների, պատմական հուշարձանների, լանդշաֆտների, բակերի, զբոսայգիների և այլնի լուսավորությունը: Ցանցը լիովին կավտոմատացվի և կներդրվի հեռակառավարման համակարգ:
- Փողոցների լուսավորության ցանցում ինտեգրված «խելացի» տեխնոլոգիաներ:
- Փողոցների լուսավորության ցանցը կօգտագործվի սենսորներ տեղակայելու համար, որոնք կօժանդակեն քաղաքի երթևեկության հսկողության կենտրոնին:
- Փողոցների լուսավորության ցանցը կօգտագործվի սենսորներ տեղակայելու համար, որոնց միջոցով կմշտադիտարկվի օդի որակն այն հատվածներում, որտեղ արտանետումների սահմանաչափերի գերազանցումների մակարդակը բարձր է՝ տեղեկացնելու երթևեկության հսկողության կենտրոնին, որպեսզի վերջինս ձեռնարկի մեղմման գործողություններ:

Ըստ հատակագծի, եթե քաղաքի մեկ բնակչի էլեկտրաէներգիայի տարեկան միջին ծախսը 2002թ. կազմում էր 580Վտժ (մոտ 1,6կՎտժ օրեկան), 2023թ.՝ 801 Վտժ (մոտ 2.2կՎտժ օրեկան): Էլեկտրաէներգիայի պահանջարկի աճի այս դինամիկայի պահպանման պարագայում մինչև 2030թ. այդ ցուցանիշները կավելանան մինչև 865 Վտժ (մոտ 2.4կՎտժ օրեկան):

Երևան քաղաքի էլեկտրաէներգիայի սպառման աճի ցուցանիշներ

	2002թ.		2023թ.		2029թ.	
	հազ.կՎտ.ժ	հազ.կՎտ.ժ	2002թ համեմատ. աճը, %	հազ.կՎտ.ժ	2023թ համեմատ. աճը, %	
Բնակչություն	640572	882294	37.7		9	
Այլ սպառիչներ	837760	1490330	77.8	1758589	18	

Սպառման աճը մեծապես պայմանավորված կլինի հետևյալ գործոններով.

- Էներգատար հաշվարկներ (տվյալների մշակման կենտրոններ, մայնինգ և այլն)
- Էլեկտրական մեքենաների լիցքավորման ենթակառուցվածք
- օդորակման և հովացման համակարգեր:

Թեպետ, Երևանը մեծ առաջընթաց ունի էներգաարդյունավետության և էներգախնայողության տեսանկյունից, սակայն, Հատակագծի «Էլեկտրամատակարարում» ենթաբաժինը գրեթե ինչպես այդ հարցերը, այնպես էլ Երևանի ԿՔԳՕ ռազմավարական նպատակները չեն դիտարկվել: